ՎԱՀԵՐ ԴԻԼՈՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՄԻ ԷՋ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՀԱՅՐԵՆԱՎԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Տարակույս չկա, որ 19-րդ դարի և առհասարակ հայոց պատմության մեծագույն դեմքերից է Ներսես Ե Աշտարակեցին: Վիթխարի եռանդի և անլուր հայրենասիրության տեր այդ անձնավորությունն իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրել է հայ ժողովրդի և Հայաստանի ազատագրության ու հայրենի պետության վերականգնման վեհ գործին: Չկա հասարակական և քաղաքական գործունեության և ոչ մի բնագավառ, որտեղ այդ անզուգական անձնավորությունը դրսևորած չլինի իր բոլորանվեր նվիրվածությունը հայրենիքին: Քաջ գիտակցելով, որ աղետաբեր դարերից ու պետության կորստից հետո Հայ Առաքելական Եկեղեցին է եղել հայկական պետականության կրողը և հայ ժողովրդի ազգային հարատևության երաշխավորն ու վեմը, Ներսես Աշտարակեցին ի սկզբանե իր գործունեությունը նպատակամղեց Հայ Եկեղեցու ինքնության ապահովմանը և նրանում ի սկզբանե գոյություն ունեցած ժողովրդավարական ոգու վերականգնմանը, որը եղծվել էր օտարերկրյա տիրապետության դժնի լծի տակ: Նրա ջանքերով էր, որ 1808 թ. Դանիել Ա Սուրմառեցու կաթողիկոսության ժամանակ ստեղծվեց Էջմիածնի բարձրագույն խորհրդարանը կամ սյունհոդոսը. նա էր, որ Էջմիածնի իրավունքների պաշտպանության համար համարձակ ու մեղադրական գրագրության մեջ մտավ պարսից գահաժառանգ Աբբաս Միրզայի հետ. նա էր, որ հիմնեց Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, որի գործունեության շնորհիվ թափ ստացավ հայ մշակութային և կրթական կյանքը արևելահայ իրականության մեջ. նա էր, որ առաջնորդեց ռուսական բանակին և հայ կամավորներին՝ տապալելու խանական վարչակարգը Արևելյան Հայաստանում. նա էր, որ Լազարյանների հետ համատեղ ճիգ ու ջանք չխնայեց՝ ապահովելու ազատագրված Արևելյան Հայաստանի պատմական սահմանների վերականգնումը և հայկական ինքնավարությունը. նա էր, որ, աքսորվելով հանդերձ իր սիրեցյալ հայրենիքից, չընկճվեց և շարունակեց պայքարել նրա իրավանց համար. նա էր, որ, ազգի կամքով դառնալով գահակալը Սբ. Էջմիածնի Մայր Աթոռի, անտեսեց և հաշվի չէր նստում 1836 թ. մարտի 11-ի ցարական «Պոլոժենիեի» հետ: Մի խոսքով, Ներսես Աշտարակեցին այն անհատականությունն էր, որ իրավամբ վաստակեց «Պաշտպան հայրենեաց» անունը: Այդ տեսակետից յուրաքանչյուր նոր վավերագիր, նրա գործունեության ամեն մի մանրամասն գալիս է վկայելու այդ հիրավի անզուգական անձնավորության հեռատեսությունն ու նպատակասլացությունը:

Ցավալի է, իհարկե, մատնանշել, որ նման մի խոշոր և եզակի գործչի գործունեությունը շատ դեպքերում արժանացել է միտումնավոր բացասական գնահատականների: Եղել են պատմաբաններ և հրապարակախոսներ, ովքեր չեն խորշել նրա հասցեին շպրտել «ցարական գործակալ» և նմանաբնույթ

տիաճ անվանումներ: Շատ դեպքերում էլ պարզապես լռության են մատնել նրա ծառայությունները իր հարազատ ժողովրդին: Մինչդեռ անչափ մեծ է եղել նրա ծառայությունները իր հարազատ ժողովրդին: Այսպես, օրինակ, դեռ 1814 թ. ժամանակի հայտնի դեմքերից Մելքիսեդեկ քահանա Ղամազյանը գրում էր Հովակիմ Լազարյանին՝ Լազարյան ճեմարանի իրական հիմնադրին. «Թէպէտ վեհագնութիւն Ձեր չէ տեսեալ գհիշեալ Ներսէս արհին. բայց համարեա թէ մինն է ի Սբ. Աթոռն. յամենայն կողմանէ ընտրեալ և իմաստութեամբ գերազարդեալ»:[1]

Տարիներ անց, 1828 թ., Կոստանդին Արղության-Երկայնաբազուկը, հանդիպելով Ներսես Աշտարակեցուն, հետևյալ կերպ արտահայտվել նրա մասին խաչատուր Լազարյանին գրած նամակում. «Ներսես սրբազանը այն անձնավորությունն է, ինչ որ դուք ի նկատի ունեք: Նա պատմական հովիվ է և ոչ թե սոսկ հենակների կոթնած արքեպիսկոպոս»:[2]

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման դարաշրջանի հայ հասարակական-քաղաքական գործիչներից շատերը Ռուսաստանի և նրա զենքի հաղթանակի հետ էին կապում ոչ միայն Հայաստան աշխարհի փրկությունը, այլև նրա «անցյալ փառքի» վերականգնումը: Նրանց թվին էր պատկանում Ներսես աշտարակեցին: Բայց եթե Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու գաղափարը աներեր էր, ապա նույնը չի կարելի ասել Հայաստանի ապագայի հարցում նրա ակնկալիքների մասին: Իր գործունեության սկզբնական շրջանում, ելնելով այն հանգամանքից, որ «մինչև ցայսօր ժամանակի ընդ ամենայն տեղիս նեղեալ և վշտացեալ յանհնարին տառապանս զանազան ազգաց բարբարոսաց՝ ազգք հայոց» իրենց պարտական են համարում «յամենայն օր աղօթել վասն քրիստոնէից թագաւորացն և զօրացն զօրապետաց նոցին»[3], և դա երկար ժամանակ ընդգծված համոզում էր նրա մոտ, ապա ավելի ուշ նա վճռականորեն հարց էր դնում ռուսական իշխանությունների առջև՝ տեսնելով նրանց հապաղումը և շատ դեպքերում տարտամ կեցվածքը. «Դու ես որ գալոցն ես, եթէ այլում ակնկալցուք» , «Դու ես որ փրկելոցն ես զհայրենիս մեր եթէ այլում ակնկալցուք, և եթէ դու իցես, երագեա և զարթող զօրութիւն քո հզոր ձեռն մեծասաստ կայսերութեան ռուսաց ի փրկել զաշխարհ հայրենեաց Հայաստանի և զորդիս հաւատոյ սրբոյն Գրիգորի մեծի Պարթեւի»:[4]

Բայց երբեմն Հայրենյաց պաշտպան Կաթողիկոսը մտածում էր, որ կարելի է Հայաստանի ազատագրությունն ու պետական վերականգնումն իրագործել այն դեպքում, եթե ռուսաց կայսրը համաձայնի ընդունել Հայաստանի թագավորի տիտղոսը: Այս առումով խիստ բնորոշ է Ներսես Աշտարակեցու 1821 թ. հունիսի 1-ի նամակը ռուսահայոց առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Գառնակերյանին. «Այլ եթէ հնար իցէ,- գրում էր աշտարակեցին,- մի անփոյթ լիցիս ամենայն ջանս խնամ ունել զի որպէս կարող են ամենայն ազգն հայոց անզանազան կերպիւ ճանաչել և ընկալնուլ զնորին կայսերական մեծութիւնն իբրեւ զթագաւոր հայոց, նախապէս եղիցի և հաճութիւն մտաց

---

[1] Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 104, գործ 8, վավ. 111:

[2] ԽՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 880, ցուց. 5, գ. 25, թ. 121բ:

[3] Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 164ա, վավ. 155:

[4] Նույն տեղում, թղթ. 165, վավ. 368:

իւրոյ կայսերական մեծութեան ճանաչել և ընկալուլ ազգն հայոց ամենաողորմած հայեցողութեամբ իբրեւ զազգ երեւելոյն Հայկայ և այնպէս խնամ ունիլ առ վերածել զնոսա յիւրեանց հայրենի փառսն...»[5]: Ինչպես տեսնում ենք, այստեղ նա չէր մոռանում, որ եթե հայերը ռուսաց կայսրին ճանաչելու են իբրև « Հայոց թագաւոր», ապա նա էլ չպետք է մոռանա, որ իր գայիսոնի տակ է ընդունելու «զազգ երեւելոյն Հայկայ» և հոգ է տանելու վերածնելու նրա «Հայրենի փառքը» , այսինքն՝ պետությունը:

Ռուսաց կայսրին Հայաստանի թագավոր ճանաչելու հարցի կապակցությամբ հետաքրքիր է նաև այն վկայությունը, որ հաղորդում է ֆրանսիացի ուղեգիր Վ. Ֆոնտանիեն, որը 1821-1829 թթ. ճանապարհորդել էր Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում: Էրզրումում գտնված ժամանակ Ֆոնտանիեն այցելում է տեղի հայոց առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունուն և լինում առաջնորդարանին առընթեր դպրոցում, որտեղ պատին փակցված է տեսնում ռուսաց կայսրերեն կայսրուհու պատկերները: Ֆոնտանիեն գրում է, որ «այդ հերձվածողները» /իմա՝ լուսավորչական հայերը - Վ. Դ./ «նրանց համարում են իրենց օրինական գերիշխանները»:[6] Ֆոնտանիեի նկարագրած այդ փաստը ինքնըստինքյան խոսում է այն մասին, որ ռուսաց ինքնակալներին իրենց գերիշխան ճանաչելը հայոց մեջ բավականին տարածված մտայնություն է եղել և, ամենայն հավանականությամբ, բովանդակել է այդ եղանակով Հայաստանի ինքնավարությանը հասնելու գաղափարը:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, 1827 թ. գարնանը, Ներսես Աշտարակեցու նախաձեռնությամբ «զինուորութեան հայոց ինքնակամ» գնդերի ստեղծումը՝ սեփական դրոշներով, նույն հայկական պետության վերականգնման նպատակն էր հետապնդում:

Դեռևս պատերազմի ավարտից առաջ, երբ արդեն Սբ. Էջմիածինը և Վաղարշապատը ազատագրված էին, Ներսես Աշտարակեցին, որը իրավացիորեն չէր վստահում Ի. Ֆ. Պասկևիչին և երկյուղ էր հայտնում, որը, ցավոք, արդարացավ, որ նրա գալուստով ոգևորությունը կարող է փոխարկվել տրտմության,[7] իսկույնևեթ միջոցներ ձեռք առավ, որպեսզի էջմիածինը դրվի ռուսական իշխանություններից համամատաբար անկախ վիճակի մեջ և կարողանա իրականացնել հայկական ինքնավարության ակնկալիքները:

Այդ տեսակետից խիստ հետաքրքիր է այն վավերագիրը, որ կազմել էր Աշտարակեցին Վաղարշապատում, որը էջմիածնապատկան տարածք էր, ինքնավարություն ստեղծելու նպատակով: Ի նկատի ունենալով այդ վավերագրի պատմական արժեքն ու նշանակությունը, այն ամբողջությամբ հրապարակում ենք ստորև:

Խնդրո առարկա վավերագիրը կազմվել է 1828 թ. հունվար ամսին, «ըստ բարձրագոյն հրամանի ծայրագոյն կառավարչին հոգևորականաց» (իմա՝ Ներսես Աշտարակեցու - Վ. Դ.): Սույն վավերագրով կարգադրվում էր հինգ անձանցից դատավորներ ընտրել Վաղարշապատի համար, որը «թէպէտ այժմ գիւղ է, բայց նախապէս Հայաստանեաց թագաւորանիստ տեղին էր»: Ուստի

---

[5] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 24, վավ. 158:

[6] Voyage en Onen, enterpris par ordre du gouvernement Francas, de l'anne'e 1821 a l'anne'e 1829, par V.Fontanier, Paris, 1829, p 57.

[7] Տես Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 168, վավ 638:

ընտրյալ դատավորները պարտավոր էին «օր ըստ օրէ ի պատիւ նախնի հայրենի բարի անուան զարդարութիւն, զուղղութիւն, զանազանութիւն, անկողմնապահութիւն ձեր լսողաց և տեսողանաց, որպէս ճրագ յաշտանակի եղեալ ցուցանել. քանզի որպէս ի Սբ. Աթոռոյս Էջմիածնայ՝ ըստ որում կաթուղիկէ ամենայն եկեղեցեաց, ելանեն հոգևորական օրէնք, նոյնպէս ի Վաղարշապատէդ՝ որովհետև թագաւորանիստ տեղի, ձեր հայրենասէր արդարութեան դատողական բարի համբաւն մարմնաւորական օրինաց սկիզբն լիցի ի մէջ բոլոր Հայաստանեաց սահմանի...»:

Ինչպես տեսնում ենք, այս վավերագիրը վկայում է, որ Ներսես Աշտարակեցու մտայնությամբ, Էջմիածինը և Վաղարշապատը, ըստ էության, դառնալու էին Հայաստանյայց կենտրոնը՝ մայրաքաղաքը, և օրենքներ էին ընդունվելու՝ ելնելով ազգային ավանդույթներից ու արդարության սկզբունքներից:

Ստեղծվելիք ընտրվի իրավարանը կամ դատական ատյանը պետք է իր հատուկ շենքն ունենար, գործերը պարտադիր կերպով վարեր գրավոր, գործեր կանոնավոր, իրավարանից դուրս «յիմար գռեհկութեամբ» խնդրանքներ չընդուներ: Դատավորները չպետք է համարձակվեին ծածուկ կամ հայտնի ընծա.ու կաշառք վերցնել, «քանզի կաշառ կուրացուցանէ զաչս ճշմարտասիրաց», «զի թէ կաշառատուն և թէ կաշառառուն միապէս պարտին պատժիլ խստագոյն օրինօք ի Սրբոյ Աթոռոյս բարձրագոյն կառավարութենէ»: Սահմանվելու էր չափ ու կշռի միասնություն, վերավաճառը կանխելու և չքավոր խավերի շահերը պաշտպանելու նպատակով մինչև կեսօր պարենամթերքը հարուստները և դրսից եկած մեծագնորդները իրավունք չպետք է ունենային գնել, այլապես տուգանք էին վճարելու հօգուտ Վաղարշապատում հիմնվելիք վարժարանի, իսկ կրկնվելու դեպքում խստագույնս պատժվելու էին: Մարմնական պատիժներ և հայհոյանքներ չպետք է կիրառվեին, «զի հարկանողն ի շարս գազանաց է, հայհոյիչ և անիծաբան բերանն տուն և բնակութիւն սատանայի և դիւաց նորա է»:

Վաղարշապատում իրավարանը պետք է «հասարակ վարժարան մի» հաստատեր մանուկների կրթության համար: Իրավարանը պարտավոր էր նաև պահակություն սահմանել «անդոց, այգեաց և ջրոյ կառավարութեան, մանաւանդ անասնեղինաց աղագաւ», որ չվնասեն այլոց ցանքսերին ու այգիներին:

Պետական կամ Սբ. Էջմիածնի Աթոռի համար Կոռային պարտությներ կատարելը չպետք է բարդվեր աղքատների ուսերին, այլ ընդհակառակը, «աղքատաց խնայելով թէ զանձինս և թէ զանասունս աշխատեցուսջիք»: Մայր Աթոռի ծառայողները՝ ամալաները, պետք է հարկերից ազատ մնային:

Ներսես Աշտարակեցու սահմանած վերոհիշյալ կանոններից երևում է, որ նա կամենում էր բռնապետական խանական կառավարման հետևանքով երկրում տարածում գտած բոլոր բռնի և բարբարոսական մեթոդները, կաշառակերությունն ու ընծայատվությունը արմատախիլ անել և փոքրիշատե տանելի կենսապայմաններ ստեղծել ազգաբնակչության լայն խավերի համար:

Ստորև ներկայացվող հիշյալ վավերագիրը հետաքրքիր և հատկանշական փաստաթուղթ է ոչ միայն այն առումով, որ երևան է հանում հայկական ինքնավարություն ստեղծելու փորձերից մեկը և դրանով իսկ ցույց տալիս ժամանակի գերիշխող մտայնությունն ու հույսերը, այլև այն առումով, որ Ներսես Աշտարակեցուն բնութագրում է իբրև մի գործչի, որը տոգորված էր ժողովրդավարական անքաքույց տրամադրություններով, սեփական ժողովրդի

և հայրենիքի առաջընթացի շահագրգռություններով: Եվ որ կարևորն է, այն նաև որոշ իմաստով խիստ արդիական հնչողություն ունի:

***

Ըստ բարձրագոյն հրամանի ծայրագոյն կառավարչին հոգևորականաց, և ըստ բարեկարգութեան կաթուղիկէ եկեղեցեաց Սբ. Էջմիածնի կառավարութեան տնօրինեցմամբն Սբ. Աթոռոյս մօտի գիւղի Վաղարշապատ անուանեցելոյ, ըստ կանոնադրութեան Քրիստոսասէր կայսերութեան ռուսաց՝ որ ընդհանրապէս ունի զայս կանոն՝ իւրաքանչիւր քաղաքք և գիւղք ի բնակչաց իւրեանց՝ ունիցին գոլովայ, դատաւոր և հոգաբարձու:

Բայց ըստ ներկայ միջոցիս կառավարութիւնս մեր հինգ արժանաւոր անձն ի գիւղականացդ ընտրեցաք. առաջինն՝ զաւագ քահանայ տէր Ղազարն Գրիգորով, ըստ որում հոգևորական և խոստովանահայր ժողովրդաց յԱստուածակոյս կողմանէ ակնածու և խրատիչ լիցի այլ ընտրեալ անդամոցն, զի մի՝ աստ յատկացեալ դատաւորաց անձն իւր զիւրեանց օգուտսն նկատել միաբերեսցեն, և մի՝ աչառութեամբ հարստաց՝ այլ կողմնապահութիւն և աղքատաց հարստահարութիւնս արասցեն: Երկրորդն էրեցփոխ պրն Կարապետ Նաւասարդովն: Երրորդն պրն Յոհաննէս Շամքօռովն: Չորրորդն պրն Սահակ Յակոբովն, և հինգերորդն տիրացու Սիմէօն Տէր Եսայովն. զի սոքա հնգեքեան որպէս հայր և տէր բնակչացն գիւղին հարստաց և աղքատաց, այգեաց և որբոց պարզ քրիստոնէական հոգւով առանց զոք զրկելոյ թէ յայտնի և թէ ի ծածուկ՝ և կամ մինչ ի մտաբերելն ևս իսկ ումեք անիրաւ դատողութիւն անել կամելոյ ըստ կամացն Աստուածայնոյ դատաւոր արդարութեան լիցին, զի և յԱստուծոյ ընկալցին ըստ այդպարակամ հոգւոյ իւրեանց զարժանաւոր պսակ անհասանելի:

Բայց ի վերայ այս հնգից ընտրեալ անձանց յատուկ վերակացու հաստատեցաւ կառավարութեանս անդամ բարձր արժանապատիւ Յովսէփ վարդապետն, զի զոր ինչ յիշեալ դատաւորքն ըստ կարեաց իւրեանց ոչ կարասցեն վճռաբատել՝ պարտաւորք են ծանուցանել յիշեալ բարձր արժանապատիվ վարդապետին, և նորա բանիւն վերջացուցանել. իսկ թէ ե նորա անլուծանելի կրճիմն պատահեսցի յայդմ դատողութեան, հետևի ծանուցանել բարձրագոյն կառավարութեանս Սրբոյ Աթոռոյս, յորմէ լինելոց է վերջին վճռաբատութիւն և բաւականութիւն զրկեցելոց: Վասնզորոյ հարկատուի բարձրագոյն կառավարութիւնս հետևեալ ցուցակօք իբր հայելի տալ դատաւորացդ այդմիկ, զի զհրատարակելիսն կանխաւ ծանուսջիք հասարակութեան վաղարշապատեցւոցդ, և իսկ հարկատրսն դատաւորացդ՝ ոչ թէ ի գրիս, այլև ի սիրտ ձեր միշտ գրեալ ունիցիք, զի ըստ այնմ զօրութեան և խոհական դատողութեան ձեր միշտ բարեկարգեսջիք:

Որովհետև սոյն Վաղարշապատ թէպէտ այժմ գիւղ է, բայց նուխապէս Հայաստանեացս թագաւորանիստ տեղին էր, ուստի պարտիք ամենեքեանքդ օր ըստ օրէ ի պատիւ նախնի հայրենի քարի անուան զարդարութիւն, զուտդութիւն, զանաչառութիւն, զանկողմնապահութիւն ձեր լսելաց և տեսանողաց որպէս ճրագ յաշտանակի եղեալ ցուցանել. քանզի որպէս ի Սբ. Աթոռոյս Էջմիածնայ՝ ըստ որում կաթուղիկէ ամենայն եկեղեցեաց, ելանեն հոգևորական օրէնք, նոյնպէս ի Վաղարշապատէդ՝ որովհետև թագաւորանիստ տեղի, ձեր հայրենասէր արդարութեան դատողական բարի համբաւն մարմնատրական օրինաց սկիզբն լիցի ի մէջ ողոր Հայաստանեացս սահմանի շնորհիւ Քրիստոսասէր Կայսերութեանն Նիկոլայ Պավլովիչի և գերազանց կառավարչաց նորին:

Արդ՝ զոր կարգադրեցոց եմք ցուցակ, են ի ներքոյ հետևեալքն: Նախ՝ պարտիք ունիլ մեկ յատուկ տեղի, ի մէջ որոյ եղիցին ի սակաւոյն երեք սենեակք, առաջինն՝ ձեզ նստելոյ և դատելոյ տեղի. երկրորդն՝ գրագրի և հարկաւոր թղթոց պահպանութեան որպէս պահարան. երրորդն՝ ամրագոյն տեղի վասն բանտարկելոց անհնազանդից և քրէական հանցաւորաց:

Երկրորդ՝ հարկաւոր է ձեզ յատուկ ատենադպիր և գրագիր ունիլ, զի ամենայն դատողութիւնք և վճիռք ձեր ըստ քրիստոնէական տէրութեան և մեր հայրենի կանոնաց եղիցին զհարկաւոր դատսն առանց գլուխեան չթողուլ. իսկ զբերանացոյնսն խղճմտանօք բանիւ բերանոյ վերջացուցանել, զորս գրատրոք սկսանիք՝ պարտիք ևս գրել ի ժառնալ որ է մշտնջենական ցուցակ, և զվճռանատութիւն ձեր անդամք այդ դատատրացդ այարտին ստորագրել, նոյնպէս և ատենադպիրն. և Նորա ստորագրութեան զօրութիւնն է, թէ այս գործ ի մշտնջենական ցուցակն գրեալ իցէ, և ամենայն գրութեան ձեր համար նոմերայ պարտի լինիլ, այլև հատկացեալ կնիք մի հարկ է ձեզ ունիլ՝ ի միջակիտին պատկեր Սբ. Էջմիածնի, և ի շրջապատն՝ կնիք Վաղարշապատու իրաւարանի:

Երրորդ՝ պարտիք յամենայն օր քաց ի կիւրակէից և ի տէրունական տօնից կամ ի Հայսերական քապիլնի աւուրց, որ է կայսերական տօնախմբութեան աւուրք, այլ աւուրքն հասարակապէս յամենայն առաւօտու զկնի արձակման զիշերայն ժամու մինչ ի երեք սահաթ անպակաս պարտաւոր էք գտանիլ ի մէջ իրաւարանին ձեր. զի մի՝ եկեալ խնդրունակքն դատարկ վերադարձցին, և յօրական պարենից զրկեալ եղիցին:

Չորրորդ՝ կանխապէս ծանուցէք ամենայն վաղարշապատեցւոցն մեծի և փոքու, զի մի՝ ոք յեկեղեցին կամ ի ճանապարհի, կամ ի փողոցս և կամ ի տունս քարեկամաց յիմար գռեհկութեամբ համարձակեալ վասն գործոյն իւրոյ խնդրող լինիցին. քանզի խնդրանաց տեղին յատկացեալ իրաւարանն է, և ոչ այլ տեղիք:

Հինգերորդ՝ դատատրք թէ ծածուկ եւ թէ յայտնի ընծայ կամ կաշառ յումեքէ մի՝ համարձակեսցի առնուլ՝ քանզի կաշառ կուրացուցանէ զաչս ճշմարտասիրաց. նաև ընդդէմ է բարեկարգութեան հզոր Հայսերութեանն. վասնորոյ գիտակ լերուք, զի թէ կաշառատուն և թէ կաշառառուն միապէս պարտին պատժիլ խստագոյն օրինօք ի Սրբոյ Աթոռոյս բարձրագոյն կառավարութենէ:

Վեցերորդ՝ հաստատուն բանիւ երդմայեսցէ իրաւարանդ ամենայն առուտուր անող անձանց մի միայն Ս. Աթոռոյս փարձեալ հազար մսխալանոց քարովն նոյն հաւասարութեամբ որքան և բաժանին կէս լիտր, չարէք և ստիլ, աւելի պակաս չլինի մէկի խանութն կամ ի տունն: Նոյնպէս գինոյ և արաղի չափն զոր ինչ նշանակեալ ունիցիք ի Սրբոյ Աթոռոյս, այլ առաջին զանազան կշիռ և քարինսն և գչափսն՝ բոլորովին անհետ արարեալ կորուսջիք ի տանց և ի խանութից ձերոց: Նմանապէս և վաճառականութեան գազն, կիսագազն, չարէքն և գրեհն ուղղութեամբ և երկու ծայրքն իրաւարանի ձեր նշանովն եղիցին:

Եօթներորդ՝ նշան մի պարտէ ունիլ իրաւարանդ ի վերայ ձոյի բարձրացեալ ի գիշերայն ժամէն մինչ ի կէս օրն, թէ յինչևիցէ ուտելեաց, հացեղինաց և մրգեղինաց. ձկնեղինաց, մսեղինաց, և ըմպելի արաղի և գինոյ մի ոք թէ հարուստք թէ դիւրեանդարք և թէ յարտաքուստ եկեալ բեռնով գնօղք մն համարձակեսցին առնուլ վասն օգտի իւրեանց կամ յառաջ ընթանալ ի ճանապարհին խաբէութեամբ գին դնիցէ. զի յետոյ ինքն առնուլ կարասցէ. այդպիսեաց առաջի անգամի պատիժն՝ եթէ հարուստ իցէ կամ դրսի գիւղացիք երկու մանէթ տուգանս տայցեն ի Վաղարշատատդ լինելի վարժարանին: Երկրորդ անգամ նոյն անձին անհնազանդութեանն չորս մանէթ

տայցէ յիշեալ վարժարանին. իսկ թէ յանդգնեալ նոյն անձն օգտասէր լինելով՝ ներկայ կացցէ այս բարեկարգութեան, խստագոյն օրինօք թագաւորական և հոգևորական դատեալ պատժեսցի: Նոյնպէս և հարուստ դիւքեանդարք այն օրինակօք տուժեսցին և պատժեսցին: Իսկ աղքատ դիւքեանդարք, առաջի անգամ ազահօրն կէս մանէթ. երկրորդ անգամ ազահօրն մեկ մանէթ տուգանս տայցեն վարժարանին. իսկ երրորդ յանդգնութեանն ըստ վերոյ նշանակեալ կերպին դատեալ պատժեսցին:

Քանզի մինչ ի կէս օրն այրեաց, աղքատաց, որոց և անտերունջ անձանց պարտիք ակնածու լինիլ, զի իրաքանչիւր ըստ կարողութեան իւրոյ գալիտոյս տան առցեն և պատրաստեսցեն. ի լրանալ կէս առուրն՝ դրօշակն իջուցեալ ընդարձակ լիցի ամենեցուն մինչև երեկոյ. ով կամի և որքան առցէ:

Ուրեմն երրորդ՝ որովհետև Աստուած յերկնից և Քրիստոսասէր Կայսր Նիկոլայ Պավլովիչ յերկրէ անքաւ և անակնուելի ողորմութիւնս արարին հայրենեաց մերոց Հայաստան աշխարհի. ուրեմն իրաքանչիւր քրիստոնեայ պարտիմք այնպիսի գովանի վարս ցուցանել, զի խնամակալքն մեր Աստուած և Կայսրն փառատրեսցին ի մեզ: Ուրեմն պարտապան եմք և էք կարօղքս զստորադրեալսն մեր ի բարի վարս կրթել և ուսուցանել. զի մի ոք ըստ առաջին բարբարոսական կրթութեանց եղիցի հարկանօղ ընկերին՝ ձեռամբ, փայտիւ կամ գազանացեալ՝ քարիւ. նոյնպէս և մանկանց ձերոց սաստեսջիք չլինիլ հարկանօղ և հայհոյիչ, զի հարկանօղն ի շարս գազանաց է, հայհոյիչ և անիծաբան բերանն տուն և բնակութիւն սատանայի և դիւաց նորա է:

Այլև զգոյշ պարտին լինիլ դատաւորքդ, զի երիտասարդք զլրբենի համարձակութիւնսն ի բաց թողցեն, եթէ ոչ իցեն յոյժ մերձաւոր ազգականք, մի՝ կարասցին ի տունս կարծիքականս ել և մուտս առնել. եթէ յանդգնին՝ ըստ առաքելոյն Պօղոսի, մատնել զայնպիսին սատանայի՝ այսինքն պատժոյ և դատապարտութեան, զի հոգին ապրեսցի:

Իններորդ՝ որովհետև հաւատ և բարեկարգութիւնք ի լրոյ են, և լուր ի բանէն Քրիստոսի, պարտիք դատաւորքդ մեծ հոգացողութիւն ունիլ, զի ի մէջ գիտելի հասարակ վարժարան մի հաստատել, յորում որդիք ձեր աստուածային գրեամբք կրթեսցին, և լինիցին բարի օրինակ այլոց:

Տասներորդ՝ ի բանիլ գարնան բաւական թուով պահապան կամ դարատուլ պարտիք կացուցանել անդաց, այգեաց և ջրոյ կառավարութեան, մանաւանդ անասնեղինաց աղագաւ մեծապէս զգուշանայք որ չվնասեն այլոց. թէ գայգիս և թէ զանդաստանս. եթէ ումեք անասնեղէնն միւսոյն վնաս տայ. կոիւ վէճ չի անեն. այլ վնասեալն գայ ձեր իրաւարանն խնդրվի, և դատաւորքդ պարտական էք արդար վճռով բաւականացուցանել զվնասեալ եղբայրն ձեր, թէ վնասատուն դատաւորացդ ապրանքն ևս լինի՝ առաւել արդարութիւնն ձեր վերայ յայտնեցէք, որ այլք ի ձէնջ օրինակ առցեն:

Մետասաներորդ՝ որ ինչ հարկաւոր հրաման պատահեսցի, թէ ի կողմանէ տէրութեան և թէ ի Սրբոյ Աթոռոյս կոռ անելոյ սէլ, եզն, մարդ և մշակ տալոյ առանց կարգաղրութեան զրկողութիւն աղքատաց չի անէք. հետևեցէք որ այդպիսի պատահեալ ծառայութիւնսն հարուստ և միջակ անձինք ըստ արժանաւորութեան իւրեանց զայդպիսի ծանրութիւնսն կրեսցեն. իսկ եթէ հարկաւորի՝ և աղքատաց խնայելով թէ գանձինս և թէ գանաւունսն աշխատեցուսջիք: Եւ եթէ պատահեսցի ղօնախ տալ՝ ամենեին յետին աղքատաց տունն և գոմն մարդ և ձի չդնէք, որ այդ կատարեալ զրկողութիւն է այնպիսի աղքատաց: Իսկ եթէ պատահեսցի ոտքով կամ

անձամբ աշխատել, յայնժամ կարօղդ կարէք վարձու կալնուլ զայնպիսի աղքատսն ի տեղի սրային ձեր. նա միայն իւր սրային պարտական է, և ոչ այլոց:

Երկտասաներորդ ըստ նախնի սովորութեան և պարտաւորութեան ձեր գիւղականացդ որքան ամալայք ծառայօղք են Սրբոյ Աթոռոյս ազատք են ի հարկաց, նոյն ազատութիւնն միշտ պարտի լինիլ հաստատուն ի մէջի ձեր. նաև հասարակութեամբ վասն Սրբոյ Աթոռոյս յամենայն պատահմունսն ըստ նախնի սովորութեանն առանց տրտնջանաց և ժամանակ կորուսանելոյ այարտին հասուրակութիւնք ձեր ըստ նշագրութեան կառավարութեանս հասանել և զայաշտօնն կատարել:

Այսքիկ երկոտասան հիմնադրութեան կարգադրութիւնք հաստատուն պարտէ ի միջի ձերում մնալ. քաց յայսցանէ ոչ ինչ ի ծայրագոյն կառավարչաց յիւրաքանչիւր ժամանակի ի յայտ գայցեն, պարտաւորութիւն է Սրբոյ Աթոռոյս կառավարութեանն ընկալնուլ ընդունելութեամբ և իրաւարանին ձեր ծանուցանել, զի ենազանդութիւն ձեր յայտնի լիցի ամենեցուն, որով արժանատրիք զովութեան և պատուոյ. նաև ի գոլ տրբազնակատար Վեհապետին ի տեսանել զայսպիսի բարեկարգութիւն՝ ուրախական սրտիւ աղօթօղ և օրհնօղ լիցի ամենեցուն, և ըստ արժանաւորութեան դատաւորացդ ընկալնուք զվայրս ձերոյ ի նորին տրբազնակատար Վեհապետութենէ:

1821, յունվար

Կաք. դիւան, Թղթ. 58, վավ.112